

Իմ գյուղը գեղեցիկ և յուրահատուկ է իր բնությամբ, խորհրդանշական մատուռներով, խաչքարերով, սառնորակ ջրով և հատկապես բնակիչներով: Իմ գյուղը գտնվում է ժայրամասում, բայց իր յուրահատկությամբ չի գիջում ոչ մի գյուղի: Իմ գյուղը շատ քչերին է հայտնի, այն մի փոքրիկ անկյուն է, որտեղ ես ապրում եմ 16 տարի: Երբ սկսվեց չարաբաստիկ պատերազմը, ականատես էի լինում, որ մարդիկ կորցնում են իրենց գյուղը՝ ծննդավայրը, և իմ գիտակցության մեջ հայտնվում էր այն մտավախությունը, որ ես կարող եմ կորցնել ծննդավայրս: Եվ ես գնահատեցի ամեն ծառն ու թուփը, քարն ու ջուրը, քանի որ գիտակցում էի, որ եթե կորցնեմ իմ գյուղը, դրա հետ մեկտեղ կկորցնեմ մանկությանս օրերը, ներկան և ապագան: Ես սիրում եմ իմ գյուղը՝ իր հոգսերով և խնդիրներով հանդերձ:

Գեղեցիկ է իմ գյուղը տարվա բոլոր եղանակներին. գեղեցիկ է ձմռանը, երբ այն բարուրվում է սպիտակ ձյունով, գեղեցիկ է հատկապես գիշերը, երբ փողոցում վառվում են լույսերը և լուսավորում խորը քնի մեջ մտած գյուղը՝ իմ Գեղարքունիքը: Իսկ առավոտյան գյուղի առօրյան լցվում է դպրոց ու մանկապարտեզ իջնող երեխաների գիլ ձայնով: Գյուղում կյանքն էլ ավելի աշխուժացավ, երբ վերջապես բացվեց նորակառույց մանապարտեզը:

2021թվականի գարունը մի նոր թարմությամբ, նոր գույներով եկավ՝ անսահման ժպիտ, խինդ ու բերկրանք պարգևեց իմ Գեղարքունիք համայնքի փոքրիկներին: Այո՛, երեխաները, անկախ իրավիճակից, պետք է ուշադրության կենտրոնում լինեն, իրենց լիարժեք և պաշտպանված զգան, ձևավորվեն որպես անհատներ՝ վաղվա լուսավոր ապագան կերտելու համար: Մանկապարտեզը երեխաների կյանքում դառնում է այն առաջին լուսավոր ու հեքիաթային աշխարհը, որտեղից սկսվում է նրա զարգացումը: